ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

N 215
19.8.2021 Թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի՝ Ձեզ ենք ուղարկում Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2021 թվականի օգոստոսի 13-ի N 8 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝ էլեկտրոնային:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատ.՝ Աշխատակազմի քարտուղար Ա. Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2021 թվականի N 38-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջների՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 13-ի N 8 արտահերթ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնքային սեփականություն համարվող հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին
2. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին
3. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի մանկապարտեզի, բժշկական ամբուլատորիայի և սպորտդահլիճի կառուցման մրցույթը հրատապ հայտարարելու մասին

Կողմ -4 **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ
4. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2021 թվականի N 39-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, Նոր Արտամետ համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է*** թույլատրել համայնքի ղեկավարին.

1. Օտարել համայնքային սեփականություն համարվող հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն աղյուսակի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4 **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ
4. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աղյուսակ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /հա/	Նպատակային դիտավորությունը	Գործառնական դիտավորությունը կամ հողատեսակը	Մեկնարկային գինը /դրամ/	Սահմանափակումներ
1	Նոր Արտամետ		0212-0025	2.52273	Գյուղատնտեսական	Այլ հողատեսք	2522730	չկան
2	Նոր Արտամետ		0213-0014	1.8017	Գյուղատնտեսական	Արոտավայր Այլ հողատեսք	1801700	չկան
3	Նոր Արտամետ		0213-0017	1.75192	Գյուղատնտեսական	Այլ հողատեսք Արոտավայր	1751920	չկան

Աշխատակազմի քարտուղար՝ _____ /Ա. ԶԱՔԱՐՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2021 թվականի N 40-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի համասեփականատերերի դիմումը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի վարչական տարածքում գտնվող, Յուրիկ Հովհաննիսյանին, Սիլվա Հովհաննիսյանին, Հովհաննես Հովհաննիսյանին, Հարություն Հովհաննիսյանին և Արմինե Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.3530 հա (կադաստրային ծածկագիր՝ 0202-0026) գյուղատնտեսական նշանակության վարելահողից 0.17 հեկտարի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությամբ՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4 **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ
4. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2021 թվականի N 41-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 3-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2016 թվականի դեկտեմբերի 12-ի «Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 49-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Հավելվածի «Ծրագրի անձնագիր 7» շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:
   2) Հավելվածի «Ծրագրի անձնագիր 8» շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2-ի:
   3) Հավելվածի «Աղյուսակ 9. ՀԶԾ Ֆինանսավորման ամփոփաթերթը» շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 3-ի:
   4) Հավելվածը լրացնել «Ծրագրի անձնագիր 9»-ով՝ հանաձայն հավելված 4-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ -4 **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ
4. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝
2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 41-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 7

«Ջրահեռացման համակարգի կառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Միջոցներ հայթհայթել համայնքի ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքների իրականացման համար						
Ծրագրի անմիջական նպատակ Համայնքում հին կոյուղագծերի վերանորոգում և համայնքի նոր կառուցվող թաղամասի համար կոյուղու կառուցում:	Կոյուղու խողովակաշարի երկարությունը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (գծմ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1000					
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Կեղտաջրերի արտաքին մակերես դուրս գալու հավանականության փոքրացում, կեղտաջրերի հեռացման աշխատանքների կրճատում՝ ֆինանսական միջոցների տնտեսում:	1.Կոյուղու խողովակաշարի վերանորոգում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (գծմ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1000	1000			525	1525
Ծրագրի հիմնական գործողությունները	1. Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում 2. Մրցույթի հայտարարում 3. Պայմանագրի կնքում 4. Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .30000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 19000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 19000.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2020-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Շատ վատ վիճակում է գտնվում ջրահեռացման ներհամայնքային համակարգը, որը երբևիցե հիմնովին չի վերանորոգվել, և մոտակա տարիներին չվերանորոգելու արդյունքում համայնքը կկանգնի բարդ խնդրի առջև: Համակարգի կոլեկտորը բաց է, կոյուղաջրերը թափվում են բաց դաշտ՝ աղտոտելով շրջակա միջավայրն ու առաջացնելով գարշահոտություն: Նոր համակարգի արդյունքում կլուծվեն վերոնշյալ խնդիրները:						

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝
2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 41-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 8

«Բազմաֆունկցիոնալ կանգառների տեղադրում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել կանգառների կառուցման աշխատանքների իրականացման համար						
Ծրագրի անմիջական նպատակ Տրանսպորտին սպասող բնակչության անվտանգության և հարմարավետության ապահովում	Կանգառների քանակը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (հատ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
							4
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Կագառների տեղադրում սահմանված վայրերում	1.Կանգառների կառուցում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (հազար դրամ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
							9000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1. Դրամական միջոցների հավաքագրում 2. Մրցույթի հայտարարում 3. Պայմանագրի կնքում 4. Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 9000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 9000.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Կանգառների տեղադրումը սահմանված վայրում կկաարգավորի երթևեկությունը և կապահովի ուղևորների անվտանգությունը :						

ՀԱՎԵԼՎԱԾ 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 41-Ն ՈՐՈՇՄԱՆ

4. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Նոր Արփամետ համայնքի ՀԶԾ-Ի ֆինանսավորումն ամփոփված է Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
Նոր Արփամետ համայնք
(2017-2021 թթ.)

Հազ.դրամ

	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները					
			2017	2018	2019	2020	2021	Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	Բարեգործություն/նվիրատվություն	Դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցներ	Այլ աղբյուրներ
1	Հանդիսությունների սրահի գազֆիկացում և ջեռուցման համակարգի տեղադրում	2000	2000										
2	Համայնքի փողոցների և բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում	140000	15000	15000	35000	35000	40000	115000	25000				
3	Խմելու ջրագծերի վերանորոգում և կառուցում	7000	7000										

4	Գազաֆիկացում	45000	20000	15000	5000	5000	5000					45000	
5	Արտաքին լուսավորության աշխատանքների կատարում	25000			13000	12000		12500	12500				
6	Գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման արտադրամասերի և գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծում	200 000										200 000	
7	Ջրահեռացման համակարգի կառուցում					9000	10000	9000	10000				
8	Բազմաֆունկցիոնալ կանգառների տեղադրում	9000					9000	9000					
9	Մանկապարտեզի կառուցում						160 000	160 000					

ՀԱՎԵԼՎԱԾ 4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝
2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 41-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 9

«Մանկապարտեզի կառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել մանկապարտեզի կառուցման և կահավորման համար
Ծրագրի անմիջական նպատակ Ունենալ ժամանակակից նախադպրոցական հաստատություն, որտեղ կհաճախեն համայնքի երեխաները, ինչպես նաև լրացուցիչ աշխատատեղերի ստեղծում:	

Յուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (հզորություն)				
	2016	2017	2018	2019	2020	2021
						2 խումբ

Ծրագրի միջանկյալ արդյունքներ

Համայնքի երեխաների հաճախում գեղեցիկ, հարմարավետ կահավորված մանկապարտեզ և շուրջ 20 աշխատատեղերի ստեղծում

1.Մանկապարտեզի , բուժկետի և մարզադահլիճ շենքի կառուցում

Յուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (հազար դրամ)					
	2016	2017	2018	2019	2020	2021	2021
							160 000

2.Աշխատատեղեր

Յուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	2021
	0						20

3, Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը

Յուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	2021
	0						35

Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 160 000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 160 000.0 հազար դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021-2022թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նոր Արտամետը երիտասարդ և աճող համայնք է: Ներկայումս չունի որևէ նախադպրոցական հաստատություն, համայնքի երեխաները հաճախում են հարևան համայնքների մանկապարտեզներ, ուստի մանկապարտեզի կառուցումը հնարավորություն կտա ապահովել համայնքի մոտ 50 երեխաների նախադպրոցական կրթության իրականացումը և ստեղծել նոր աշխատատեղեր երիտասարդ կադրերի համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2021 թվականի N 42-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ, ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԴԱՀԼԻՃԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ՀՐԱՏԱՊ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի մանկապարտեզի, բժշկական ամբուլատորիայի և սպորտդահլիճի կառուցման մրցույթը հայտարարել հրատապ բաց ընթացակարգով՝ 15 օրացուցային օրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4 **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ
4. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ